

ՄԱՍԿԻ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ - ԽՄԲԱԳԻՐ
ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ

ՏԵՐԴ. ՏԱՐԻ ՆՈՐ ՇՐՋԱՆ Բ. ՏԱՐԻ ԹԻՒ 8 12 ՅՈՒՆՎԱՐ 1908

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ

Լյդիկ Համար
Գերմանուհի Գրողներ
Շառլ Կեռն
Սրիմոզաի Ասխաբայեյաթիկը
Պշտուհիներ
Եղիա Տեմիրճիպաշեան
Քննարկ (Այդիկը)
Ուոլին
Զիւնի Հասիկը

ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ
ԱՏՈՄ ՇԱՀԷՆ
ՄԵՐՈՒԺԱՆ ՊԱՐՍԱՄԵԱՆ
ԳԵՂԱՆՈՅՇ ԳԱՎԱՖԵԱՆ
ՀՐԱՆՏ ՆԱԶԱՐԵԱՆ
ԼԵՒՈՆ ԷՍԱՋԱՆԵԱՆ
Ռ. ՍԵՒԱԿ
ԱՇՈՏ Բ. ՔԷԶԵԱՆ
ՍԱՐԳԻՍ ՆԱԼԲԱՆԴԵԱՆՑ

30 ՈՍԱԿԻ ՊԱՐԳԵԻ

ՏԵՍՆԵԼ "ՄԱՍԻՍ", Ի ԹԻՒ 7Ը

Կ. ՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐ. Կ. ԲԷՇԵՇԵԱՆ
1908

UNIVERSITY

OF THE STATE

OF NEW YORK

THE STATE OF NEW YORK
OFFICE OF THE COMMISSIONER OF EDUCATION

REPORT OF THE COMMISSIONER OF EDUCATION
FOR THE YEAR 1908

ALBANY: J.B. LIPPINCOTT COMPANY, 1909.

ALBANY: J.B. LIPPINCOTT COMPANY, 1909.
NEW YORK: J.B. LIPPINCOTT COMPANY, 1909.
PHILADELPHIA: J.B. LIPPINCOTT COMPANY, 1909.
CHICAGO: J.B. LIPPINCOTT COMPANY, 1909.
ST. LOUIS: J.B. LIPPINCOTT COMPANY, 1909.
SAN FRANCISCO: J.B. LIPPINCOTT COMPANY, 1909.
BOSTON: J.B. LIPPINCOTT COMPANY, 1909.
CAMBRIDGE: J.B. LIPPINCOTT COMPANY, 1909.

NEW YORK: J.B. LIPPINCOTT COMPANY, 1909.
ALBANY: J.B. LIPPINCOTT COMPANY, 1909.
PHILADELPHIA: J.B. LIPPINCOTT COMPANY, 1909.
CHICAGO: J.B. LIPPINCOTT COMPANY, 1909.
ST. LOUIS: J.B. LIPPINCOTT COMPANY, 1909.
SAN FRANCISCO: J.B. LIPPINCOTT COMPANY, 1909.
BOSTON: J.B. LIPPINCOTT COMPANY, 1909.
CAMBRIDGE: J.B. LIPPINCOTT COMPANY, 1909.

THE STATE OF NEW YORK
OFFICE OF THE COMMISSIONER OF EDUCATION

REPORT OF THE COMMISSIONER OF EDUCATION
FOR THE YEAR 1908

ALBANY: J.B. LIPPINCOTT COMPANY, 1909.
NEW YORK: J.B. LIPPINCOTT COMPANY, 1909.

ՏՕՔԹ. Ե. ՄՍՍԻՍ

ԲԵՐԱ, ԹԱԳՍԻՄ ՓՈՂՈՅ, ԹԻԻ 12

Ամէն տեսակ ներքին հիւանդութիւններէ զատ, մասնագիտաբար և երկար տարի- ներէ ի վեր կը դարմանէ ստամոքսի, աղիքներու, միզային ճամբաներու հիւանդութիւնները, ջղային տկա- րութիւնները, հին և նոր գաղիական ակտերը: Այս վերջին ակտերը՝ առանց ստամոքսի խանգարման և նորագոյն մեթոսնե- րով կը բուժէ կարճ միջոցի մէջ: Հիւանդ կ'ընդունի ամէն օր կէս օրէ վերջը: Չորեքշաբթի օրերը միայն ձրի:



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց և տաղաւակի աղբիւր մըն է: Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Է Ր

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍ. ՊԱՆԱՏԱՆ

The Singer Manufacturing Cie.

Ձեռքի, ոսքի ու ոսքի եւ ձեռքի միանգամայն մեքենաներ կը գտնուին:

մեքենան լաւագոյնն է. այս մեքենան ամէնէն աւելի կատարելա- գործուածը, հաստատունը և դիւրա- գործածելին ըլլալուն՝ բոլանդա- աշխարհի մէջ՝ ամէն ոք Սինկերի մեքենաները կը գնէ:

Սինկերի մեքենաները կը ծախուին միմիայն Սինկերի Ընկերու- թեան վաճառատուններուն մէջ՝

ՆԱԼԱԹԱ
ԲԵՐԱ
ՊՈԼԻՍ
ՍԿԻՏԱՐ

- 1. Մեծ փողոց, Պօն Մառէի դէմ, 343 և 343.
- 2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ.
- 1. Սինկեր խան, Թիւնէլին հտեւը.
- 2. Դարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ.
- 1. Սուլթան Համամ.
- 2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայանին դէմ. 13.
- 2 արշը Պօյու, Թ. 120.

Դասերը եւ նորոգութիւնները ձրի:

Կատարել երաշխաւորութիւն:

Մասնաճիւղեր գաւառներու բոլոր փողոցներուն մէջ

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ Փողոց, Թիւ 343 և 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւղօղլուի տունը:

Վ. ՍԻՄՕՆ.

Բարիկ

HYGIÈNE BEAUTÉ
CRÈME SIMON



ՔՐԷՄ

ՍԻՄՕՆ

Ֆրիզերինով պատրաստած
և ամենց որ եւ է հարգական խղի

Էստ գոյն արտադրութիւնն է
ան՝ պահպանելու համար ԳԷՄ-

ՔԻՆ ՈՒ ԶԵՌ-ՔԵՐՈՒՆ

ձերմակորիւնը

1900ին բարիկեան ոսկի ճապրամ

Քրեմ Սիմոնը մորթը կը պահպանէ օդին ազդեցութեան դէմ .
ճաթառութեան , կարմրութիւններուն և խորշակահարութեան
առաջը կ'առնէ :

Եթէ վրայէն Սիմոնի քրեմափոշիի թեթեւ խաւ մը քսուի ,
դէմքի գոյնին երիտասարդութեան չլացուցիչ փայլ մը կու տայ :

Պէտք է ամէն օր գործածել դայն , թաց լաթով մը մորթին վրայ
տարածելով և յետոյ մեղմ չփումով մը ներս թափանցել տալով :

Ճարպային ոչ մէկ մարմին չպարունակելով , ամբողջովին կը
լուծուի ջուրին մէջ :

ՄԻԱԿՆ Է ԱՆ ՈՐ ԲՆԳՈՒՆՈՒՄԵ ԲԱՆԱՅ ԲԱՆՈՐ ԳԵՂԱՆԻ ԳԵՐԱՍԱՆՈՒՆԻ-
ՆԵՐՈՒ ԿՈՂՄԷ :

1860ին հնարուած , իսկապէս առողջապահիկ ու ամենաառաջ-
նակարգ Քրեմն և ան աղւորութեան : Բովանդակ աշխարհի մէջ
իր ունեցած յաջողութիւնը առաջ բերած է բազմաթիւ կեղծեր ,
որոնցմէ պէտք է խորշիլ ու խոյս տալ :

Քրեմ Սիմոնը , քրեմափոշի Սիմոնը և Սիմոնի
օճառը կը գանուին զեղարաններուն , անուշահոտու-
թեան վաճառատուններու և պապարներու մէջ :



Գնո՞ւմ ասեմ-պէ՛տ է լաւ ֆինկ վաճառանից՝ ու պէ՛տ է քլայ
նովի պատկերին նիւս հանը :



ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ - ԽՄԲԱԳԻՐ

ԵՆՈՎԻՔ ԱՐՄԻՆ

ՏԵՐԴ. ՏԱՐԻ ՆՈՐ ՇՐՋԱՆ

Բ. ՏԱՐԻ ԹԻԻ 8

12 ՅՈՒՆՎԱՐ 1908

ԷԳԻՆ ՀԱՄԱՐ

Սեւ ու խաւարչտին տմայութիւններու մէջ փոշեհոծ սիւներով այն աղօրիքին՝ ուր կը գիշերէի, քստմնելի ոճիւր մը գործուեցաւ երէկ գիշեր, գերազանցապէս եղերական պարագաներու տակ, որոնց առթած ահաբեկիչ զգացումները տակաւին մինչեւ հիմա կը դողացնեն զիս, ահաբեկ տագնապով մը :

Ժխորալից ու որտալնդոտաւ աղմուկ մը, կէս-գիշերին անկողինիս մէջ ցատկեցուց զիս, աննկարագրելի սարսափով մը :

Եւայ ցցուեցայ պառկած տեղս, անեղը վախի մը մատնուած, ու ցնցող սարսուռով մը կը դողայի, ի՞նչ ըլլալէս անտեղեակ, յանկարծակիի եկած, ոչքա կէս-լաց, կէս-գոց, քունը զլուխս, չկրնալով մեկնել անցած-դարձածը :

Թաւալղլորումի խլացուցիչ աղմուկ մը կը դղրդէր աղօրիքին գետնայարկը և անուր կերպով խառնաչփոթ ժխորին մէջէն, սրտաճմլիկ, աղերսարկու, խուլ ճիւղ մը կը բարձրանար, չարունակական խեղդուկ կանչի մը խորէն, որ չէր դադրեր և որ աղերսած օգնութիւնը չգտնել կը թուէր :

Յանկարծական ահ ու դողի մը մէջ, մոռնալով ամէն վախ, ձեռքիս տակ ինկած աղօտ ճրագը առնելով, վար վազեցի, օգնութեան հասնելու զգացումով անոր՝ որ կը ճէ՛ր աղմուկին մէջ,—մոռնալով վախը թէ՛ կրնայի ինքզինքս զոհ դարձնել վարը տեղի ունեցող պայքարին :

Երբ սանդուղին վերջին ոտքն ալ աւարտեցի, տագնապալի մղձաւանջներս փարատեցան մէկէն, որովհետեւ մէջտեղը մէկը չէի գտներ, ինչպէս կը սպասէի :

Բայց աղմուկն ալ չէր կասած, և աս անգամ, ա՛լ աւելի սաստիկ, ալ աւելի տագնապալի ու վայրագ չեղտորով՝ կը դըրգէր գետնայարկը իջնող սանդուղին գլուխը :

Ճրագը դէպի ետեւ բռնած, կէս-մութին մէջը, քնատ ու կակծացող աչքերով սեւեռուն նայուածք մը՝ դէպի հեռուն, ամէն բան բացատրեց վայրկենաբար : Ու լալն շունչ մը սկսայ առնել, ապահովուած ամէն վերահաս վտանգէ, որուն կը սպասէի հանդիպիլ, վար իջած ժամանակ, և պայքարիլ, եթէ պէտք ըլլար :

Սեւ ու գիրուկ կենդանիներու խումբ մըն էր աղմուկը հանողը, անձանաչելի դարձած անասուններ, որոնք վախազգեցիկ մութին մէջը, տխրատեսիլ ու խորշելի երեւոյթ մըն էին առած :

Ձէթի սեւ պարկերու պէս իրարու վրայ գիլուած և անբաժանելի կերպով իրարու սլլուած, մէկ կողմէն միւսը կը գլորէին շարունակ, միաբերան աղաղակ մը բարձրացնելով, փոխն ի փոխ խռպոտ, աններդաշնակ, սուր ու կեղկեղ :

Վայրագ խածատումի մը մէջ, սուր ու ձիւնաթոյր ակռանին իրարու չլինքին ու կռնակին անցուցած, անբաժան գիրկընդխառնումով՝ թաւալգլոր կու գային, ա՛նդադար, մէյ մը մէ՛կը տակ երթալով, մէյ մը միւսը :

Ինքնամոռացումի, վայրագութեան և մոլեգին արիւնարբութեան անեղը ցասում մը կը կայծակէր իրենց մանտրաիկ աչքերէն, որոնք, մութին մէջը, ճգնաժամի անհուն տագնապով՝ խոշոր-խոշոր բացուած, կը վառէին, կը փալիլային, անազգեցիկ պզտիկ հրէշներու երեւոյթը տալով իրենց,—մարդու չերեւցող անձանօթ կենդանիներու պէս, որոնց դիպուածակտն տեսքը վախ ու սրսփանք կ'առնէ :

Պայքարը կը շարունակուէր միշտ, կատաղի թափով մը և հետզհետէ մոլեգնելով, անվրդով ո՛ր և է վախի համար, որովհետեւ ձեռքիս լոյսը իրենց կողմը չէր իյնար, և քանի մը թանձր սիւներ, որոնց վերեւէն կը դիտէի զիրենք, կը խափանէին իմ տեսքս իրենց աչքին :

Գիրկընդխառն զանգուածէն՝ պահ մը կ'անջատուէր մէկը, ետ-ետ երթալով՝ աւելի բո՛ւռն խոյանքով մը յարձակելու համար կեղբոնի գօտեմարտիկներուն վրայ, որոնք, իրենց կարդին, անընդհատ ու ան-

յառ Խաճատումներով, զիրար բռնաբերել կը աքնդէին, չգիտնալով թէ որտե՛կ կաշիրին միտած են իրենց ակռան, իրարու կռնակէ կախուած, փոխն ի փոխ իրարու վրայ յարձակելով, պատուտելու, բռնաբերելու ահաւելի վայրագութենէ մը բռնուած և վրէժխնդրութեան, ցատումի կատաղի ճիչեր արձակելով իրարու դէմ:

Կռիւին մէջ մոլեգնած աքաղաղի մը պէս, որ իր յաղթահարուած հակառակորդը իր դո՛նը ընկէ՛ն ալ գուժ չզգար, և անոր սմբելէն, գլուխը կախելէն, սատկելէն ետքն ալ վրայէն չզատուիր ու կ'ուզէ որ կառուցովը փեթթէ զայն,—գերագոյն գոտեմարտի մը մէջ, անոնք կ'ուզէին ոչնչացնել զիրար, ճիրաններով, ակռաներով, մագիլներով, ամբողջ հոգիով իրար սպաննելու մոլեգնութիւնով զինուած:

Վախատունը չէր դադարէր երբեք, և անոնցմէ ո՛չ մէկը զինաթափ կ'ըլլար, վերջնական պարտութիւնը կամ յաղթանակը հռչակելով:

Երկարածդուռ ու սուր ճիչեր, որոնք կը բարձրանային իւրաքանչիւր Խաճատումի առեւն, Խառնակ ու սարսաղ զգեսիկ ներդաշնակութիւն մը կը յորինէին, տպաւորութիւնը տալով անձանթ տախարհի մը բնակիչներուն վախատունին:

Անասուններէն մէջանգը դանուռը տարապայման կերպով գիրուկ մը, որուն վրայ կեդրոնացած ըլլալ կը թուէր ամէն քինախնդրութիւն, ժխորին ու ծեծին մէջէն խոյս տալ ուզել կ'երեւար, բայց երկու նիհար ու անպիտան ձագեր, պոչերնին իրարու փաթթած ու կռնակի վրայ, զայն իրենց գիրկին մէջն էին առած, ամուր մը գրկելով իրենց առջևի թաթերովը, կռնակի վրայ քսկռտուելով շարունակ, ամէն անգամ որ չլթան մէկ կամ միւս կողմ կը քաշկռտուէր: Առեւանգութեան ձեւն էր թերեւս ատիկա՝ ողորմելի անասուններուն, որոնք ալ տարասեռին պարզեւած վայելքին ճաշակը ունենալէ չպակսիլ կը թուէին:

Գողօնի աղ ձեւին հետ, միւսները դարանակալուածին վրայ խուսուած, իրարու ուսին չօքած ու իրարու հեծած, անվերջանալի պայքարը կը մղէին, թաւաղլոր զալով, ծեծելով, ծեծուելով, Խաճատուելով, ճչելով, ու երբեք չյողնելով:

Բայց ամէն ուժ զինուած ըլլալ կը թուէր կեդրոնի գէր խեղճին վրայ, որ զինքը պաշարող կաշկանդումէն, աղտտելու գերագոյն ճիգով, կը թապալտէր, կտոր-կտոր կ'ըլլար, փորը կը պատուէր, բայց իր շուրջինները, զինքը իրարմէ յափշտակել կ'ուզէին ու թող չէին տար:

Դլուխնին զարձած, գերագոյն մոլեգնութեան կրակ մը կը վառէր իրենց աչքերուն մէջ, որոնք կը չեղտէին վայրագ ու նորատեսիլ տպաւորութիւնը կատաղի անասուններուն հրէշային ճակատամարտին:

Մէկէն, ընդոտ կատաղութիւնով մը, վայրագ յարձակում մը փորձեցին իրարու վրայ, և ամէնքնին մէկ, գլորեցան սանդուղին եր-

որորդ աստիճանին վրայ , ուր , մէկ քանին անջատուելով գօտիէն , մէյ մէկ ծակ մտան , յետանայեաց յիսերիմ ակնարկ մը սեւեռելէ հաքը մնացողներուն վրայ :

Մէկ քանին , կը շարունակէին դեռ կոխը , մեղկացած , ակար թափով մը , ս'լ յոգնած , վիրաւոր , վասնդաւոր խաճատումներէ ջլատուած :

Կողմն ի կողմ՝ անոնք ալ փութացին մտնել մէյ մէկ ծակ :

Կռակի վրայ դեպինը քսկառուողները , որոնց մօրթը պաշտպանուած էր բոլոր խաճուածքներէն , կը մնային դեռ իրենց դիրքին մէջ , կուրծքերնուն վրայ սեղմած՝ դէր կատուն , որ , անշարժ , թուլցած , մեղկօրէն կը մնար հոն :

Երբ ցատումին ու վրէժինդրութեան մեղմանալովը , անոնք ալ քակեցին իրենց թաթերուն շղթան , քովընտի վլաւ գիրկերնուն մէջ պիրկօրէն կաշկանդուած զոհը :

Վերջին ճիգով մը , թօթուելով , ոտքերուն վրայ դարձաւ , և , ոտամական շարժումով մը՝ ուղեց առաջանալ , բայց , անկարող , ինկաւ ու փռուեցաւ :

Գլուխը ծակած էր ու բացուած աղտոտ վէրքէն խուժող արիւնին կայլակները՝ կ'երթային թանձրանալ ու ճաղաղիք մը ձեւացնել գետինը , քամուող այն արիւնին հետ , որ մարմինին ամէն կողմէն կը կաթկթէր :

Աչքին կողերը անճանաչելի կերպով վեր դարձած ու թանձրացած արիւնի բիծերու պլշտկուն , կատարեալ կ'ընէին իր գլխակնութեան տիրատոսիլ երեւոյթը , աղէտալի պայքարի մը զոհ , փռուած մէկ կողմ , թշուաւ , եղկելի կերպով լքուած :

Իր ճակատագիրը ունեցեր էին երկու ուրիշներ ալ , քիչ մը անդին փռուած , իրենց արիւնին վրայ , ջախջախուած , ողորմելի դիակնութեան մը մէջ , երեքնին մէկ ձեւացնելով աղանդի ու զազրոտ գերեզման մը՝ սեւադգեաց դարչելի մեռելներու :

Մօտենալով հասկցայ թէ , սա՛ , անդինը՝ դէր կատուն , որ մէկ կողմ , քիթը գետինին էր տուած , գետնաքարչ ու եղերական սատակումի մը մէջ , Հրապոյր-Էգն էր , որ իր պոռնիկ անձնամատուցութիւններովը , իրեն զրգւած էր վաւաչոտ ցանկութիւնը շուրջը գեգերող Արունեւրուն , որոնք չկրնալով բաժնել իրենց մէջ , անոր Հեշտանք-Մարմինը , իրենց ու անոր գլխիկը կը փռէին իրերասպան ու արիւնարբու պայքարի մը մէջ , նուիրագործելով մեծ օրէնքը Էգի Հալածանքին :

ԵՆՈՎԻՔ ԱՐՄԷՆ

ԾԱՌԼ ԿԵՌԷՆ

Ֆրանսուա Գորէի և Մօռիս Պառէսի նախագահութեան տակ, եւ Ֆրանսիս Շարմի, Լուի Գանտիրաքսի, Վալէթի, Էրնէսթ Շարլի, Շարլ Սատուլի, Ֆրանսիս Ճէմսի և Հանրի տը Ռէնյէի անդամակցութիւնովը, Լիւնըվիլի մէջ Շառլ Կէռէնին կիսանդին պիտի կանգնուի մօտերու :

Երկտասարդ վաղամեռ բանաստեղծին անունը յաւերժացնելով՝ այդ ծանօթ խմբագրապետները և բանաստեղծները Սէրը անմահացուցած պիտի ըլլան : Որովհետեւ Շառլ Կէռէն գրեթէ միակ բանաստեղծն է որ իր կեանքը ամբողջովին նուիրած է Սէրի և Տարիանքի փառաբանութեանը : Եւ մտածել որ՝ կը գտնուին մեր մէջ անըմբռնելի սովորաբաններ՝ որոնք սիրոյ նուիրուած բանաստեղծութիւն մը արհամարհելի կը նկատեն :

«Միշտ իրենց սէրը, իրե՛նց փառքը, իրենց կուռքը, իրե՛նց զգացումները և իրենց ճարտարանքը, իրենցը եւ միայն իրենցը երգելով այդ քերթովք՝ չքաշուեցան իրենց տունին և բարեկամներուն մէջ միայն մրմնջելիք անձնականներն հրապարակով ալ տարիողելու անդադար՝ իբրե թէ ասոնք գոնէ իրենցին կէսին չափ օգուտ մը ըրէին հասարակութեան եւ մարդասիրութեան ալ, կամ Հոմերի մը Ուլիսիոսի մը անձնականներն ըլլային . . . » :

Այս տողերը ստորագրողը պատկառելի անձնաւորութիւն մըն է : Սէրը երգելը ամօթ է եղեր, մօթը, ուղեղատապը, ծափը, դափը, չերամբ, բուխերիկը և հինիան երգողը միայն «հասարակաց բարին, մարդասիրութիւնն և առաքինութեան և ալլասիրութեան երգն ու օրհներգը» ճանչցած կ'ըլլայ եղեր : Բարեկամներու մէջ մրմնջելիք անձնական մը ! չէ՞ արդեօք այն չնաշխարհիկ, իրերագովական նամակը, որ հրատարակուեցաւ «Արեւելեան Մամուլ»ի 51-րդ թիւին մէջ, նորէն անգամ մըն ալ պանծացնելու համար . . . նորօրինակ մօլորակ մը, որ իր լոյսը Անտոնեանի, Երուանդ Տ. Անդրէասեանի պէս տաղանդաւոր գրագէտներէ, գրական լուսաւորներէ առած է : Տերոյենց Պասուէլիին խմաստասէր բանահաւաքը gaffe մը, սոսկալի gaffe մը ըրաւ այդ նամակը հրատարակութեան զրկելով, որուն մէջ արժանապէս անմահութիւն կը մաղթէր մեր . . . Ուլիսիոսին :

Ինչ մը ամէն գրող չէլտած է սա պարագան թէ՛ սիրային տաղերգութիւնը անտանելի է, թերութիւն մըն է : Մեր ամէնէն լաւագոյն բանաստեղծները իրենց համբաւը կը պարտին այն մէկ քանի սիրային քերթուածներուն, որոնց ընթերցումը՝ ճշմարտապէս զգացողներու մարմինին վրայ սարսուռ մը կը պտտցնէ : Արտաշէս Յարութիւնեան իսկ,

սիրային տաղերուն մէջ ամէնէն աւելի յաջողած է . բայէ՛ք , թղթա-
տեցէ՛ք իր բանաստեղծութեան հատորները և պիտի համոզուիք ըսածիս .

Իմ կիսատուածի հպարտութիւնն իսկ
Փայլող տէրերու պատարագ ըրի ,
Եւ ետտէրի սէգ բարձրութիւնս իսկ
Սիրոյդ , ա՛յ աղուոր , պատուանդան ըրի :

Դուն փառաւորութե՛ն ու հպարտացիր
Հո՛ն , այդ զիրքին մէջ ու այդ բարձրութեան ,
Ուր սիգանալու խնդութեամբ անծիր
Ես չը ներեցի ո՛չ մէկ աղջըրան :

Երկար պիտի ըլլար մէկիկ մէկիկ ցոյց տալ մեր բանաստեղծներուն
գործին մէջ յայտնապէս Սիրոյ զօրութիւնովը արտադրուած մասերը ,
որոնք կենդանութիւն մը , առողջութիւն մը ունին և յաւիտենապէս սպա-
րելու սահմանուած են : Ֆրանսացի ո՞ր բանաստեղծը սէրը չէ տաղեր-
գած . բայց մեր նշանաւոր գրագէտներու ժառաքանած՝ *fumiste*ները
և ծանօթ կեղծ հանճարները կը չփայտին Հոմերոսէն և Թուկիդիտէսէն
դատ մարդ չճանչնալու : Տարիքին առած ակադեմականներ և պե-
տական մեծ անձնաւորութիւններ Եւրոպայի մէջ ամէն տարի բանաս-
տեղծական հատորներ կը հրատարակեն , որոնց մէջ ամէն բանէ առաջ սիրոյ
զգացումը աստուածացած է : Էստօն տ'Արօզուրի բացակայ սիրունիի
մը ուղղած յուսահատ տաղերը , Անաթօլ ֆրանսի ուժգին և բնապաշտ
սիրերգութիւնները , մահուանդ Բօլ Պուրժէի , այս եղական հօգերան
վիպասանին անուշ քծներգերը և հրաշալի սիրերգները պէտք է համո-
զեն մեր դժուարահաւատները թէ՛ սիրային բանաստեղծութիւնը պէ՛տք
է գոյութեան իրաւունք ունենայ , պէտք է ամէն տեղ մշակուի :

Շառլ Կէռէնի պէս զգայուն , սիրերգակ խանդավառ բանաստեղծի
մը յիշատակին կանգնուած կիսանդրին կ'ապացուցանէ բացարձակապէս
որ գրական այդ սեռը , արժանապէս կը յարգուի եղեր , որքան որ ի՛նք ,
Շառլ Կէռէն հակառակը կը մտածէր :

Օ՛հ , կեանքը արդէն ի՛նչ տխուր անակնկալներ ունի , ի՛նչ տեսակ
յուսախաբութիւններով , մեղամաղձութիւններով , վիշտերով յղի է : Կ'ար-
ժէ՞ որ ուրիշներուն գուժկան լալօններովը ու խամաճիկի կողկան-
ծիւններովը մեր վայրկեանական հաճոյքները վերցովենք :

*

1873ին ծնած է Շառլ Կէռէն :

Գրեթէ ամէն տարի կը ճամբորդէր ան , երաժշտութեան ու նկար-
չութեան հայրենիքները կ'այցելէր , գեղարուեստի վերաբերող ամէն
բան կ'ուսումնասիրէր , իր նրբախոյզ ու թանկագին յատկութիւններով
ալ հարուստ բանաստեղծի խառնուածքը աւելի զարգացնելու համար :
Միւսներուն մտաւորական բանաստեղծութիւններուն քով , Կէռէնինը

փափուկ ու ամպային երևոյթ մը կ'առնէր : Ձեւապաշտ բայց միեւնոյն ատեն զգացումի ճշմարիտ բանաստեղծութիւնը իրմով կը ստանար նորօրինակ փայլ մը : Կանոնաւորապէս աշխատակցած է Մեռֆիւռ սը Ֆրանսի , Ռըվիւ Պըլանշի , Իմսմի , Ռըվիւ սե Տեօ Մօլիսի , Էռմիքսմի և Սօննէի , որուն խմբագիրը եղած է : Իր բառերը ճակատագրային թաղծութիւնով մը խտեացած են : Բայց այդ ակնթարթիւնը երբեք չնմանիր շատերու զսպուած , յուցամով , նոպատակաւոր ցաւերգութիւններուն : Նուրբ , երազանուշ , քաղցր արտմութեան մը քօղը ունին իրենց վրայ այդ բանաստեղծութիւնները , ամբողջ խանդով , հրայրքով , կեանքով աւելցուն : Իր քերթուածներու հատորներուն մէջ ամէնէն աւելի աչքի կը զարնեն Հերիգլաս Ռիւկըն ստորագրութիւնով հրատարակած Ձիւնածաղիկները , Le cœur Solitaire , Le Sang des Crépuscules , Le Semeur de Cendres և L'homme Intérieur. Le Cœur Solitaireի մէջ կը գրէ ան .

Ինչո՞ւ արդեօք ինձի պէտք եղող ուժգին նանձարը չունիմ ,
Բնթերցողներու Սարուն սէրերը խորունկ կեպով յուզելու համար ,
Աւա՛ղ , այո՛ , պիտի ուզէի անոնց նուիրել՝ այն գիրքը , ուր ամէն սիրող
Իր համբոյները պիտի սպրէր ,
Եւ քանի որ ամէն բան բառ է , միշտ բառե՛ր ,
Դիտնայի գոնէ այն երկնային բառերը որոնք լացնել կու տան .

Այս անկեղծ խոստովանութիւնը կ'ընէ , առանց խորհելու թէ՛ իրմէ զատ քիչեր գտնուած են , մարդկային սիրտը յուզելու և երեւակայութիւնը ներդաշնակ գեղեցկութիւններով համակելու համար , այդքան երիտասարդ տարիքի մէջ :

Երբեմն զիրար հակասող , իրարմէ տարբեր իմաստով տողեր ունի . տեղ մը , կը տենչայ կիներու կուրծքին վրայ գալարուել , սիրային նուպայի մը անձնատուր ըլլալ , մինչդեռ ուրիշ էջերու մէջ իր սիրած կնոջը , իր փայփայած տեսլականին հեշտագին մերկութիւնները կը նկարագրէ անպատկառօրէն : Բանաստեղծութեան գիրք մը՝ վէպ չէ՛ բնաւ . իրարու պատշաճող , զիրար լրացնող ստանաւորներու հաւաքածոյ մը կրնայ ձանձրալի ըլլալ : Ամէն մէկ քերթուած իր մասնաւոր նոպատակը , վերջաւորութիւնը , իմաստը ունենալու է : Բանաստեղծական գիրք մը քննադատելու համար քերթուածները անջատօրէն ուսումնասիրելու է , իրենց առանձնակի բնութեանը մէջ :

L'Homme Intérieurին մէջ սրտաբաց տողեր չատ ունի : Կը խոստովանի թէ՛ ինք փիլիսոփայութիւն չէ մացուցած երբեք իր ստանաւորներուն մէջ , Ամբողջովին ճէննիին ուղղուած և անոր շունչովը բախտ խուն տողեր են : Առանց խորհրդածելու՝ իր զգացածը միայն գիրք առած է :

Մտածումի տկարութիւն մը
 Կարեւորութիւն չունելի ինծի համար,
 Յաճախ վճիռ ջուրը խօլ կը լռէ,
 Խիտ ու թաւուտ կանանչներուն մէջ:

Գեղեցկութիւնն է որ կը զգուեմ,
 Ու որչափ որ բառերուն
 Գեղեցկութեան հոգ տանիմ,
 Նրկա նուազ անկեղծ չէ:

Բայց երբեմն խիտ կանոնաւոր
 Տաղերու վերջուշումը
 Ինծի ցաւագին վիշտ մը զգացնել կու տայ,—
 Արուեստին վիշտը:

Ան տունն էս հոգ չունէի
 Կատարեալ ձեւապաշտութեան յանգելու .
 Ինչո՞ւ համար էս արդեօր
 Անանկ միամիտ բանաստեղծ մը չմտայի:

Եւ միշտ զգացումին և արուեստին մտահոգութիւնովը կը չարչարուի ան: Արուեստին ինքնանուիրումը իրեն կարծեցինել կու տայ թէ՛ իր բանաստեղծ կը կորսնցնէ զգացումի տեսակէտով: Եւ ես ակնթարթով զիտած եմ որ իր ամէնէն լաւագոյն ու յաջող բանաստեղծութիւնները անյանգ եղած են. արուեստէն վախճալով, անոր ահարկու ազդեցութեան իր վրայ առաջ բերած յուզումէն չփոթահար՝ ինքզինքը կը ձերբազատէ ոտանաւորի արուեստին կապանքներէն, աւելի համարձակօրէն իր զգացումը արտայայտելու համար, մոռնալով թէ վանկերը աւելի կը համբուրին: Ի՞նչ փոթ սակայն. չէ՞ որ իր նպատակը այդ պարագային զգացածը պատկերացնել է:

Իր ամբողջ գործը տարակուսանքէ, սէրէ, յուսահատութիւնէ, վիշտէ, հրճուանքէ կը կազմուի փոխադարձաբար: Կեանքի երեւոյթներու այդ օղակներովը կազմուած բանաստեղծութիւնը յանկուցիչ է ու սրտագրաւ: Իր տողերը երաժշտական սահունութիւն մը և ներդաշնակութիւն մը ունին: Մարդ կը վերանայ, կը զգածուի, կը ցնցուի զանոնք կարգալով: Բոլոր բանաստեղծութիւնները զատ զատ պիտի արժէր ուսումնասիրել. անոնք ամէնքն ալ հաւասարապէս կը ներկայանան անստգիւտ ձեւականութեան մը և զգացումներու անկեղծ արտայայտութեան մը կրնակ յատկութիւններովը: Գրեթէ միշտ տխուր է ան, ձմեռուան արեւին պէս վարկենապէս փոփոխական, բայց հեշտախառն արտմութիւնով մը՝ որ երազային ու թաւազեղ անբճանքներուն կարօտախառը կը ներշնչէ: Իր անունին անմահ մնալուն տարակոյտովը կը չարչարուի մերթ, ինքզինքը կ'ուռէ՝ ապահովուելու համար թէ՛ իր մեռնելէն ետքը զինքը սիրողներ պիտի գտնուին:

Տարակոյսի և խաւարի այս գիշերը
Դողդոջուն մասներու մէջ կը ծանրանայ գրիչս,
Վտիտ ու չոր ուրուականի մը պէս
Արդեօք անունս պիտի ապրի՞
Ուրիշ անմահներու անուններուն պէս .
Տէ՛ր , զործս քննէ՛ . պիտի տեսնես թէ
Ան մեծ եղած է և հոգիս՝ անկեղծ . . .
Բայց մարդիկը . . . շատեր զիս մոռցան,
Ուրիշներ՝ սիրտէս լցնող խորունկ ճիչերուս անտարբեր
Հարկադրեցին զիս որ լռեմ . . .

Իր մեղամաղձութեան անկեղծութիւնը անտարբեր կը ձգէր շատերը .
կը զգար թէ ինքը չկարգացուիր , իր գործը ըմբռնող չկայ : Ու ժին
գիտակցութեանը ապաւինած Le Semeur de Cendres-ի մէջ վերջապէս կը
խնդրէ Տէրոջմէն , որպէս զի գոնէ երիտասարդ մեռնի .

Դոնէ ինծի միջակ պատիւ մը չնորճէ՛ ,
Տէ՛ր , արդարութեամբ Աստուածը .
Մեռնի՛ երիտասարդ ,
Հոգիս՝ նեշտանքով , հոգարտութեամբ և
Հատարովը արբշիւ թէ՛
Մեծ պիտի ըլլայի , եթէ զես . ապրեցնէիր զիս :

Ըղձանքը կ'իրագործուի : Հազիւ երեսուն տարեկան կը մեռնէր
ան : Դէպի արուեստին կատարելութիւնը և զգացումի հեռաւոր հորի-
զոնները ըրած ջանքերը մեռնելէն վերջը միայն կը պսակուին : Թաղ-
ծութեան մշուշով մը թանձրօրէն պատնէշուած իր Լօռէնցի հոգին՝ կը
բաղիւրէր վերջապէս մահուան խորակին , փչրուելով , անէանալով :

Իր հաճոյքը , իր խեղճը , իր բաղձանքն էր ատիկա : Կանուխ
մեռնիլ , երիտասարդ մեռնիլ , իր մարմինը հոգին յանձնել՝ կեանքին
մինչև վերջին շունչը սէրը տարիողելով , յաւիտենական , անմահ Սէրը ,
որուն մեծ երգիչը ըլլալու համար՝ իր կիսանդրին կը կանգնեն :

ՄԵՐՈՒԺԱՆ ՊԱՐՍԵՄԵԱՆ

ՈՒՌՆԵ

Կեեզմանին մէջ , իրիկուան .
Ուրիշներ կը հեծեմեն ,
Ու սրգաւոր մեզ կ'երեւան
Մութին մէջ կոյր , միահեծան :

Ու քրտւի մը , մեմուցներ բիւր
կը քրթորուան , դողդալով
Իր ոտները լայնափիւռ ,
Եղեգելով , ողբ մը լարով :

Միւս վայրասիակ , միւս գլխիկոր՝
Դաբաններուն արացքին դէմ ,
Իր նիւղերուն էջն բոլոր ,
Պիւր փառելաւ կարօտ էրթեմ :

Այլի մա՛յր մ'է , արձանացած
Երբ փրցուէր կարուսը իր .
Կամ աղօթող տա՛ւրք մը , հակած՝
Նընջողներուն—խոր ունկնդիր—:

ԱՇՈՑ Բ. ԲԷՋԱՆԵ

ԶԻՆՆԻ ՀԱՏԻԿԸ

Հատիկը ձիւնին
Դարձ դարձիկ կ'իջնայ
Երկինքէն գետին ,
Այս ցուրտին հիմա :

Նոզանք մը կոյսի
Ունի ան սիրուն ,
Շատ յոյլ կը հոսի .
Կերո՞ղ՝ սիրեհուն :

Մամուր է անի ,
Յոսակ , նեղի նեմակ ,
Շուտան սիրտ ունի ,
Ազնիւ՝ բացարձակ :

Ան՝ անհունութան
Ծոցէն է փրքեր ,
Նայն է յաւիտեան
Ինչ որ առաջ էր :

ՍԱՐԳԻՍ ՆԱԼԲԱՆԳՆԱՆԵ

ԵՂԻԱ ՏԷՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ

Ճակասներն ալ հոգիի պէս կը ջիւրին
 Երբոր քախուն մուշտակներ հոն կ'իջնան ,
 Բողո՛ք մըն է խորշումներով ուրուային
 Վեհ ճակասը այն պաշկերին վեռչեկեան :
 Կը գլի , կ'անցնի մոյսիք ձիւնին , շայնալիւ
 Բիւրեղ ճակտով , որ հայրին է ֆերքողին ,
 Ստորոտ մըն է իր ճակասը եւ զանկն իր
 Լեռ մը ինձին , ուր մագերը խմբովին
 Խորշակներ են տա՛մաստմ :

Լերան ետեւ ովսսիս մը կայ խոկման
 Կեանքի ժշխո՛ր ճայներն հոն կը խեղդուին ,
 Իտեպներն ալ ունին իրենց խնկամանն
 Ուր կը միայն մեծ հեզմանք մը դեմ խաղին՝
 Կեանքին մուշտ ու քախուն :

Դա՛յն ճակասը ստորոտն է այդ Մոցին ,
 Իսկ զանկը՝ շեռ , եւ ուղեղը՝ ովսսիս ,
 Ստորոտն կը դառնայ կեանք մը մեկին
 Զոր օծած են Սիրուստիկն ու Հիւսիս :
 Ծաւաւաճի՛ւծ երբոր իյնանք անպայտ ,
 Փնտռելո՛ւ ենք համբերութեամբ Դրաքեան՝
 Ովսսիսն այդ տօքին , տալեն մերքապտ
 Փառասերով անտ սի՛րը սրբութեան
 Կամ այգերը սամազուն :

Աղւո՛ր վրձնեց անշաղք ըմբիշն երկնքի՝
 Իր ճակասը.—ստորո՛տը շեռ գլխին ,
 Բայց զանկն եղաւ Գերստեմանին երկունքի
 Ուր կը տեսնէ օրհասին մէջ տախտին
 Իր հե՛ք մայրը զեղազարմ :

Իր անշուտմէք քեւեկեցա՛ւ Գանգեսին
 Եւ քարձունքին միաքիմիական Բամիրի ,
 Հեզկնեց խաղերն ամբողջ կեանքի կրկեսին
 Բի՛րս խաղերը , կասակները անտի :

Փա՛կ կոպերուն , մշագիշիւր աշֆերուն
 Մէջ ներգզաց արիւտեան մը շեւշույ ,
 Ուրկէ ցայեց ցայտուն ցոյ՛ք մը արեւուն
 Ե՛ւ ցոյ՛քի տեղ գայ արցո՛ւնք տրամաշույ :

Լալը սեւայ օխոյ տի պէս այդ Մարդուն,
Մայրագուրկի, զգայնոտի շացն քր ան,
Լաց մը ուր կայ ոգեկոյնում մը արքուն
Որուն Դեղփիս մը պէտք կ'ըլլար յաշխեան :

Արցունքները յոյժ արդիւնքն են ծիծաղին,
Երիտէրներն ալ յայտարարներ արցունքի,
Երիտ եզրեր կը վարեն մարդն, ա՛ն, ներքին.
Որոնց միայն վերծանող մը կը պակսի :

Ի՛նչ, ժպտեցա՛ւ արդեօք աշխարհ այդ Մոգին,
Պոտիւնեան դիւն արդեօք վանե՞ց իր գանկէն,
Ժպիտները ա՛ն շիքերու կը փոխուին
Որուն Դեղփիս մը պէտք կ'ըլլայ սարսեան :

Երբ կը խնդար մօրն անունը յիշելէն
Կը կարկրէր աշխիւ շիքեր. — շրաքա՛ւր,
Երբ կը խնդար ընդհատ ընդհատ այդ ասեւ
Աշխարհն սեղ իր սիրտովն քր ուր կու շար :

Սիրին խորէն մօրը շացն քր ուր շացաւ,
Աշին խորէն Մագքաղիւնէն նշմարեց,
Մագքաղիւնէն՝ Հոփսիւնէն քր քաղմացաւ,
Հոփսիւնէն՝ իր մայրն քր. կի՛ն դառնալէն :

Ու սիրին մէջ իւրեւ պատանդ կը մնար
Բերեռագիր վեհ անունը մայրիկին,
Անոր համար շարս սեղ մերթ կը խնդար
Զի խնդուքը խարխիւն իսկ քր արցունքին :

Ի՜նչ զինքը Սիպսոյգէ մահնին մէջ,
Վիշնուական Հնդկի մը պէս անտուայ,
Իր նայումովը շիրմասանի մը ասեւ
Կը քեւեռէր սովալլուկ ու նուայ :

ԼԵՒՈՆ ԼՍՍՃՅԵՆՅԵՆ

ՊԶՐՈՒՀԻՆԵՐԸ

ՄԵՐՈՒԺԱՆՆԵՐ ՊԱՐՍԱՆԵՐՆԵՐԻՆ

«ՕՐԻ ԼԻՆԱ ՎԱՆՏԷՐ-ՆՈՒԹ»Ի * ԱՌԻՅՈՎ

Սերջածին բիբուռիկներ դիւրավառ՝
Եւ գինովեան իրենց պարէն տկարով
Դիւրկընդիստնուած երբ կը ճօնին զերդ բուրվառ
Իրենց ծորուն հմայքն ամբողջ խնկելով ,
Սերջածին բիբուռիկներ դիւրավառ :

Խօլ ու գինով անաւառիկ յոյզերով՝
Նայումքներն յոյս ու ծիծաղ կ'անձրեւեն ,
Հեռատնոց օրումքներն սիրարով՝
Մեղի՛ անուռն հիւծումն ունին գաղտնի ,
Խօլ ու գինով անաւառիկ յոյզերով :

Ու կը դառնան , անվերջ , անխոնջ կը դառնան ,
Իրենց պարք Սպառնալի՛ հեռօրօր ,
Մինչեւ որ ալ նուրք ծիրանին յոգնութեան
Հուրք բռնի իրենց հակէն մեղմածուր .
Ու կը դառնան , անվերջ , անխոնջ կը դառնան :

Լուսաբաղձիկ պարիկներու հանգունակ
Սրտգանուրք տեսիլի մը պէս աղւար՝
Նուագներու կոտակներուն ցայտին տակ
Կ'աննիւթանան իտեպա՛ծ ալ բոլոր .
Լուսաբաղձիկ պարիկներու հանգունակ :

Եեանքն ալ որքա՛ն կը նմանի այս պարին
Իտեպին , խելացնոր ու մայր ,
Ո՛վ հեռաբորք Սպառնալի պար մեղիքն ,
Կախարդական հրաշքներովն իր բոլոր ,
Եեանքն ալ որքա՛ն կը նմանի այս պարին :

ՀՐԱՆՑ ՆԱԶԱՐԵԱՆ

* Դերասանուհի՝ որ Բըթի Շանի մէջ արտեստագիտական փայլուն յաջողութիւններ ունեցաւ : [Խմբ. Ծան.]

ՄԻՆՈՋԱԻ ԱՇԽԱՐՀԱՅԵՑՈՒԹԻՒՆԸ

Աշխարհայեցութեան առաջադրութիւնն է ճանաչումը բացարձակին , որ ինքն իր մէջ կը կայանայ և որուն գոյութիւնը անժխտելիօրէն պէտք է ընդունիլ երևոյթի այս աշխարհէն անդին : Գիտական և հայեցողական հետազոտումն է ան՝ անոր ետեւէն զոր կը զգանք թէ իրական ու ճշմարիտ է , ընդգրկումն է վերանցականին [transcendental] , ըլլայ ան Պրքիի Կաղափարը , Արինոզարի Տիեզերական Գոյակը , Հոդգոթի Նիւթը , Լայպնիցի Ուժը , Շոբէնհաուէրի Կամքը , Հիումի Անձանօթը և կամ Քանդի «ding an sich»ը [իրն յինքեան] :

Ի՞նչ է այդ աւելածուածային անձանօթը՝ որուն առջեւ կը խոնարհին Հիում և Քանդ և սահման կարծելով զայն ճշմարիտին , կը գոչեն . «Անձանօթ» : Խոստովանիլ այն անձանօթը որուն իսկութիւնը խորհուրդն է , ժխտել է իմացականութիւնը . «Մարդը , կ'ըսէ Բասքալ , եղէք մըն է զազազալուսն , այլ խոտն» : Կաթիլ մը ջուր կարող է զայն խղզիլ , բայց ան կը արել տիեզերքին՝ իր իմացականութիւնով : Հոն ուր փորձականութիւնը չկրնար մանկ , հոն ապահովաբար իմացականութիւնը պիտի թափանցէ . ան միայն պիտի կարող ըլլայ գտնել իրականութիւնը , այսինքն՝ «Տիեզերական Գոյացութիւնը» , որովհետեւ ան մաս կազմելով տիեզերական իմացականութեան , կարող պիտի ըլլայ իր իսկ յատկութիւնները ուսումնասիրելով , հետեւցնել անչափ աճողջին յատկութիւնները : Իրականութիւնը անհրաժեշտապէս Գոյակ մըն է՝ իր զանազան վերադիւնելով . ուրեմն Արինոզարի Աշխարհայեցութիւնը ընելով՝ նկատի պիտի առնենք իր սահմանը Գոյակին . եւ իրաւամբ ամբողջ բնագիտութիւնը Արինոզարի զարգացումն է աստուածային անհուն գոյակին գաղափարին : Իրականութիւնը Արինոզարի համար մէկ է . միայն մէկ անհուն յաւիտեանական գոյակ մը կայ , մէկ բացարձակ նախապատճառ մը , աղբիւր ու իրականութիւն ամէն գոյացութեան : Իրեն համար աւած մըն է թէ կայ այս տեսակ նախապատճառ մը . անով է որ կը բացատրէ ամէն իրականութիւն . իր գոյակն է ան՝ որ «յինքեան կը կայանայ և ինքիրմով կը յղացուի» [1] : Տիեզերքին մէջ չեն կրնար կայանալ երկու կամ աւելի գոյացութիւններ՝ որոնք նոյն բնութիւնը և նոյն

[1] Quod in se est et per se concipitur.

[*] Սկիւտարի Ամերիկեան Ազգիկներու Վարժարանին ընծացաւարտութիւնէն Օր. Դեղանուշ Գալաֆեանի այս ուսումնասիրութիւնը «Երազի»ի «Գալաֆեանեան Թիւ»ին մէջ՝ տեղի չգոյութեան պատճառով : անխորհուրդ կրճատումի մը ենթարկուած , չարչարուած ձեւով մը հրատարակուած ըլլալով , մեզմէ խնդրուած է անոր ամբողջապէս հրատարակութիւնը : Գոնացում կու տանք այդ առաջարկին՝ թէ՛ ուսումնասիրութեան՝ ամբողջութեանը մէջ ունեցած շահեկանութեանը համար , և թէ դարմանելու նպատակով Օրիորդին առաջին մէկ հրատարակութեանը վրայ զործուած անիմաստ եղծումը , որ կրնայ իր ու իր գրուածքին վրայ ձախող գաղափար մը ներշնչել :

վերադիրները՝ ունենան [1] . Աշխարհ մէկ է ու իր մէջ գտնուող ամէն բան մասը կը կազմեն այս զինքը բացատրող բնութեան : Տիեզերական Աստուածային գոյակն է ան . Եզական է ան , անկախ և անհուն . որովհետեւ բացարձակապէս անկախ է , ուրեմն անորոշ է , և որովհետեւ անորոշ է , ուրեմն անհուն է : Անսահղծ է , բացարձակ , ճշմարիտ ու բանական , օրէնքներու օրէնքը , բնութեանց բնութիւնը և աշխարհ բնական հետեւանքն է իր էութեան , ինչպէս եռանկիւնի մը անկիւններու գումարին երկու ուղիղ անկիւններու հաւասար ըլլալը՝ հետեւանքն է եռանկիւնին բնութեան և կամ չրջանակի մը արամադիծերուն հաւասարութիւնը արգիւնքն է չրջանակին բնութեան : Եռանկիւնը որոշ մէկ բնութիւն մը , յօրինուածք մը ունի՝ որ կը զանազանէ զայն չրջանակէ մը , քառակուսիէ մը : Ահա այս բնութիւնն է որ իր անկիւններուն գումարը ճիշդ երկու ուղիղ անկիւններու հաւասար կ'ընէ : Այսպէս է նաեւ չրջանակին համար : Աշխարհ առաջ չէ եկած բլխումով , ինչպէս Նէօ-Պլատոնականները կը կարծէին : Ան ստեղծագործութեան արդիւնք չէ , ինչպէս Եբրայեցիները կը բացատրէին : Աբինոզաի համար Անհրաժեշտութիւնն [nécessité] է որ ծնունդ կու տայ աշխարհի , Միտքը՝ խորհուրդի , Նիւթը՝ ատրածութեան ձեւին սակ բացատրուած : Ահա այն յատկութիւնը՝ զոր կը տեսնենք այս գերազանց գաղափարին մէջ : Աստուած Բնութիւնն է բնութեանցնող [natura naturans] . Տիեզերք Բնութիւնն է բնութեանցեալ [natura naturata] . Մէկը Գործունէութիւնն է , միւսը Գործը : Աստուած ստեղծող սկիզբն է , Տիեզերք ստեղծեալ վախճանը :

Իրական տարբերութիւն մը չկայ իսկութեան այս երկու արտայայտութիւններուն մէջ : Աստուած ու Տիեզերք , մէկը խորհրդանիշը Զօրութեան [esprit] և միւսը Նիւթին , նոյնն են մեր տեսակէտով : Մէկը վերացումն է միւսին , անոր գոյութեան բացատրութիւնը , իր անյեղլիութեան մէջ , անոր մշտնջենաւորութեան ապացոյցը , և ամուլ իսկ criteriumը ճշմարիտին բացարձակութեան : Զօրութեան համաստեւածային ըմբռնում , հեռու մմէն կերպարանաւորուած է , իսկալ օրինադատութիւն : Այս տեսակ իմաստասիրութեան մը typeն է Աբինոզաի վարդապետութիւնը : Աբինոզա կ'առնէ Միտքը և կամ Նիւթը իրր երկու երեւոյթները նոյն միայնակ Գոյակին , իբր եղանակաւորումը բացարձակ նախապաշտօնին՝ որուն էութիւնը կը կազմեն : Անոնք համակ իսկութեան ամբողջական ու միակ արտակերպումն են , անոր անմխտելի եղբակացութիւնը , անհունին պարունակութիւնը և անյեղլիութիւնը : Տէքարդի կրկնապաշտական տեսութիւնը թէ՛ երկու ստեղծող գոյակներ կային յաւիտեակից [coéternel] և բանակից [corationnel] սկզբունք-

[1] Բարոյագ. Առաջարկ. V., VIII., XI., XIII.

ներ, իրականութիւններ, գոհացուցիչ է Սքինոզաի համար Ահա հոս իր հանձարը գերազանցօրէն կը փայլի : Սքինոզա համաստեղածութեան մը մեծաշուք յղացումին մէջ սուր յայտնատեսութեամբ մը Միտքը և Նիւթը «գործօն միութեան» մը մէջ որոշուպէս կը բաղադրէ, Միութիւն մը՝ զոր ամէն զանազանութիւններ կը գեղեցկացնեն Այս միութիւնը Սքինոզաին գոյակն է, Սքինոզաին մէկ անսահման գոյակը՝ Աստուած կամ *causa sui*՝ որ ինքզինքը կ'արտայայտէ անհուն ստորագելիներու միջոցով, միայն երկուքը ճանաչելի ըլլալով մեզմէ : Այս աստուածային ստորագելիներու անհունութեան մէջէն մարդկային միտքը կը ճանչնայ միայն անոնք՝ զորս իր մէջ կը գտնայ : Խորհուրդ ու Տարածութիւն : Մէկը ներքին խորհուրդի աշխարհն է, Սքինոզա զայն խորհող գոյակը կ'անուանէ : միւսը նիւթական աշխարհն է, Սքինոզա զայն Մարմին կամ մարմնական գոյակ կ'անուանէ : Այս երկու աշխարհները հաւասարապէս ճշմարիտ են, հաւասարապէս մէկ բացարձակ ճշմարտութեան մը յայտնութիւններն են : Նոյնքան յաւիտենականութիւն, բանականութիւն, անհրաժեշտութիւն կայ հոգիին մէջ՝ որքան կայնիւթին մէջ :

Խորհուրդ և Տարածութիւն ուրեմն երկու յաւիտենական անսահմանութիւններ են, բայց վերադիրներ են և ոչ թէ սկզբունքներ, զորս իմացականութիւնը կը յղանայ գոյակին մէջ, իր սահմանող անոր էութեան [1] : Բացարձակապէս անկախ են անոնք իրարմէ և անհուն իրենց էութեան մէջ [In sui generi] : Ճերմակ լոյսին պէս՝ որ կը վերլուծուի իր զանազան գոյներուն, որոնց իւրաքանչիւրին մէջէն նոյն աշխարհը կ'երևայ միայն տարբեր գոյներով, Գոյակը այսպէս կը վերլուծուի իր զանազան ստորագելիներուն՝ որոնցմէ միայն Տարածութիւնը և Խորհուրդը գիտենք, և որոնց իւրաքանչիւրին մէջէն նոյն գոյակը կը տեսնենք զանազան երևոյթներու տակ : «Տարածութիւնը Խորհուրդը է : Տարածութիւն և Խորհուրդ երկու անհուններ են, բայց յարաբերական անհուններ, կատարեալ, բայց որոշեալ կատարեալներ» : Գոյակը միայն անհունապէս անսահման է : Գոյակէն կը բխին անհրաժեշտապէս անթիւ վերադիրներ և վերադիրներու իւրաքանչիւրէն անթիւ եղանակաւորումներ [modus, accidens] : Ներդաշնակ լծորդութիւն մը, անբաժան զանազանութիւն մը կայ ամէն բանի մէջ : Հոս է որ կը տեսնենք ահա այն անքակտելի կապը, անփոփոխ համեմատութիւնը՝ որ օրէնքն է ամէն բանի, որ կը չղթայէ գոյակը, վերադիրները և եղանակները : Այդ օրէնքն է Իրականութիւնը :

Սա տեսութենէն թէ՛ գոյակը անորոշ է, կը հետեւի թէ ներգործութիւն [interaction] չկայ, այլ զուգակշռութիւն [parallélisme] Միտքին ու Նիւթին միջեւ, որմէ կը հետեւի Սքինոզաի սա հաշակաւոր

[1] Quod intellectus de substantia percipit tanquam ejusdem esseentiam consti tuens

սահմանը . «Պաշտօնականներու կարգը և շարքը նոյնն է իրերու կարգ ու շարքին հետ» [1] . Աներևակայելի է որ Միտքը գործէ մարմինին վրայ եւ մարմինն ալ բացատրէ միտքը : Այս երկու կարգերը ճշգրտապէս զուգընթաց են :

Նիւթ և Միտք յղացուած են միայն, որոնք կ'ընթանան միակ գոյակին մէջ , Գոյակին որմէ դուրս բան մը չկայանար և որմէ դուրս բան մը չյղացուիր : Քանի որ բան մը չկայանար Աստուծմէ դուրս, ուրեմն աղատ է ան , սա տեսակէտով թէ՛ ան կը դործէ իր իսկ բնութեան համեմատ , սա տեսակէտով թէ՛ իր գործերը կը հետեւին իր անհրաժեշտ բնութեան :

Արինոզա կ'ուրանայ անկաշկանդ կամքը : Ան կը ցուցնէ ամենախիստ անհրաժեշտութիւն . հոգեբանօրէն անկախութիւն չկայ , բնազանցօրէն անկախութիւնը կը նշանակէ բացարձակ էական գործունէութիւնը՝ որ առաջ կու գայ իր բնական անհրաժեշտութեան : Ասով է որ Արինոզա կը դիմէ բացարձակ կանխորոշութեան [determinisme] : Անհրաժեշտութիւն ըլլալու , Միտարարութիւն մէկ կողմէ , և միւս կողմէ Համաստուածութիւն , կանխորոշութիւն , տանք են գլխաւոր պարունակութիւնները Արինոզան բնազանցական դրութեան :

Ահա իր յղացումը վճիռ ու մեծ , այնքան խորունկ ու այնքան մտքուր . Նիւթը անջատ իրէն , աւելի ճիշդը՝ Նիւթը այն յատկութիւնը մարմինին՝ որ զայն կ'իրականացնէ և անոր կայական [statique] վիճակը կը ներկայացնէ . Զօրութիւնը որ անոր իսկացեալ երեւոյթին շարժական վիճակը կը ցուցնէ : Շատ քիչ խորհողներ կրցած են այսչափ ճիշդ ու այսչափ աննիւթակա մտածում մը ծնցնել մեր մէջ : Շատ քիչեր համարձակած են ճշմարտը համաձայնեցնել Բարիին հետ : Արինոզա մէկը եղած է անոնցմէ : Այս անհունի բաներուն խորունկ պաշտօնը , Աստուծոյ յաւիտենական կարգին միտքիք սիրահարը , այս գերազանց իմաստասէրը՝ որ ամէն բան կ'ընդհանրացնէր , ինքն իսկ լուսաւոյն սահմանը կու տայ մեզի ընդհանրացումին . «Պէտք է , կ'ըսէ , յաւիտենութեան հանգամանքին տակ յղանալ ամէն բան» :

[Յաջորդով]

ԳԵՂԱՆՈՅՇ ԳՈՂԱՅԵԱՆ

[1] Ordo et connexio idearum idem est ac ordo et connexio rerum sive eorum II. prop. 7.

ԳԵՐՄԱՆՈՒԶԻ ԳՐՈՂՆԵՐԸ

Մասիսի 45 թիւին մէջ «Գերման Գրականութեան Գէմքեր» վերնագիրին տակ՝ Պրն. Մէլիք Թէվէբէլ «Անցեալ Դարուն Կիւն Դրոշմեր»-ը ներած յօդած մը ունէր, որ, ցաւալի է նկատել, լեցուն էր անճշգրտութիւններով և աղաւաղումներով: Յօդածագիրը սերտ ծանօթ չի թւիր գերմանական գրական-նութեան սկզբնական շրջաններուն և աւելի նազ կը ճանչնայ նորագոյն շրջանը. բարեխիղճ ուսումնասիրութեան ծնունդ չէ իր այս յօդածը և, հետեւապէս, շատ ծախահարկի չէ որ կը խօսի այնքան հեղինակութեամբ և անվերապահ: Այդ քանի մը էջերը ապահովապէս ներկայ վիճակին մէջ չէ որ պիտի ծառայէ իրենց նպատակին—ճանչնել ժԹՐԴ Դարու գերմանացի գրողները: Յօդածին ամբողջութիւնը չի տար իսկ տասնեւորորդ ինչ որ վերնագիրը շեղբօրէն կը խոստանայ:

«Անցիլացի և ֆրանսացի հեղինակութիւններու համեմատապէս հսկայ խմբակցութիւններուն քով, կ'ըսէ Պրն. Մ. Թ., Գերմանականը նսեմանաշու ցափ պիտի գանձանաւոր: Լոյսախոյ գերմանական երբեք հակամիտքիւն չույժ չէ տուած իր անգղական ասեղիկին յասկուրիւնը գրագիտութիւնի համարաշին հետ փոխանակելու»: Ու իր ընթերցանութիւնը կը ներկայացնէ ժԹՐԴ Դարու գերմանացի գրողները, որոնք քիչով չորս ևս միայն: Այդ չորսն ալ երկու «փոքր խումբ»ի կը բաժնէ՝ երկուքական հեղինակութիւններով. [բայց ինչո՞ւ ոչ չորս խումբ] մէկ մէկ ներկայացուցիչով. [խումբերուն թիւը այդպէս աւելի պիտի սուտարանար]:

Ուրեմն, այդ յօդածի համաձայն, անցած դարու գերմանական գրականութեան պատմութեան մէջ՝ յիշատակութեան արժանի միայն երկու գրագիտութիւն, Իսա Զան-Հան [1805-1880] և Ֆանին Լէվալտ [1811-1889], —միւս երկուքը, նազ կարելոր և ալ մոռցուած դէմքեր, հետաքրքրութեան համար անւանւած էին,— և այսպէսով, բնականօրէն, գերմանացի գրողներուն թիւը աննշան և անհամեմատ փոքր է ֆրանսացի և անգլիացի գրողներու «հսկայ խմբակ-

ցութիւններուն» քով, և ադ անոր համար որ լրջախոյ գերմանական երբեք չէ ուզած, չէ կրցած տանտիկինի դերէն զուր գալ [իբր Թէ լրջախոյնութիւն խոհանարի և մանուկներ ղիեցնելու սրտառորութիւններով սահմանաւորէր և վտանգէր հոն, ուր աւելի քան երբեք պէտք է լուրջ խորհիլ]: Դժբաղդաբար — Պրն. Մ. Թ. ի համար՝ դժբաղդաբար — և ի պատիւ Գերմանիայի, ոչինչ և ոչինչ ճշմարտանման է այս հաւատաւորութիւնը: Ու հակառակ յօդածագիրին վերջնական ու անորոք դատաստանին՝ **Մասիսի** յաջորդ թիւերուն պատեցի, յուսալով որ Պրն. Մ. Թ. պիտի անդրադարձնայ իր սխալներուն և դեռ շարք մը ուրիշ գրագիտութիւններ ալ պիտի ներկայացնէ. [Մոռացումը, ինչպէս և յաւանտար տղիտութիւնը, յանցանքին պէս, խղճահարութիւններ կը զարթուցանեն երբեմն], բայց զուր էր սպասումս: Դեռ Թերէս դժուար չըլլայ մեկնել Թէ ինչո՞ւ շատ անուններ չէր թւած. բայց ի՞նչ որ դիւրին չէ բացատրել այդ չորս անգամ երջանիկ անուններուն յիշատակութեան իրաւունքն է: Ինչո՞ւ միայն չորս անուն և ինչո՞ւ մանաւանդ այդ չորսը: Ոչ անշուշտ անոր համար որ անոնք բացառիկ շահեկանութիւն մը կը ներկայացնեն առաջին գերմանացի գրողները ըլլալով, բանի որ, ինչքան զիտեմ, դեռ ժԹՐԴ դարուն կային կին գրողներ [Լուիզ Զէնրիէթը, Բաթարինը Ռէկինա Ֆոն Կալֆընպէրկ], ինչպէս և ժԹՐԴ դարուն [Մօֆիլ Լաթոշ, Կանալի վէպի առաջին հեղինակութիւնը,—Աննա Լուիզ Բարշ, Բաթօլինը Ֆոն Վոլցօլըն, Եօհաննա Շոքէնհաուէր] և ուրիշներ: Ոչ նաեւ անշուշտ անոր համար որ ժամանակագրապէս և կամ արժանիքով առաջին գրագիտութիւններն են ժԹՐԴ դարուն: Պէթթինա Ֆոն Առնիմ [1785-1859] և Աննէթթը Ֆոն Տրոթը-Հիւլս-հօֆ [1798-1848] գրագիտութիւն համարելն տիրացած էին իրենց անունները փառապսակող գործերով՝ ըիչ մը առաջ Իտա Զան-Հանէ և Ֆանին Լէվալտէ: Ու ի՞նչ են արժանիքով այս վերջինները բաղդատելով Աննէթթի հետ [մտերմօրէն այսպէս կ'անուանեն զինքը] գերմանական գրականութեան, որ Գերմանիայի ամենէն մեծ բանաստեղծութիւն համարւած է: Ի՞նչպէս բացատրել Իտա Ֆոն Տիւրնկաֆէլտը յիշատակել, զոր չեն կարողար, որ

մուգեամ է , և արժանաւորապէս , որուն գերմանական գրականութեան հսկայ պատմութիւնները իսկ հազիւ մէկ երկու տող կը նւիրեն , ու անունը չտալ Աննէթթին և Մարիլ ֆօն Էպնըր-Էշընպօլսին—վճիտ և ճշմարիտ գրագիտունին , խրապաշտ գրականութեան վարպետներէն մէկը , որ հակառակ իր 77 տարիներու յոգնութեան՝ զրիչը չէ լքած և դեռ նորերս հատոր մը յանձնեց իրեն համակրողներու հիացման : Ի՞նչպէս բացատրել նաև Պրն. Մ. Թ. ի լուծիւնը վերջին քառորդ դարու գրագիտահիներու մասին , որոնք այնքան բազմաթիւ են և որոնց գրականութիւնը , ընդհանրապէս , մեծ շահեկանութիւն կը ներկայացնէ : Ֆրանսական 12,000 և անգլիական 6,000 հատորներուն դէմ՝ Գերմանիան տարին 30,000 հատոր կը հրատարակէ : Անհատկապի և զարմանալի չպիտի՞ ըլլար որ Գերմանիոնները աշխատակցութեան պղծիկ բաժին մը իսկ չունին այսքան բեղմնաւոր , նախանձելի և անօրինակ գրական զործունէութեան մը մէջ և , քարացած իրենց լրջախոհութեամբը , միայն չորս գրագիտունի տւած են 100 տարեան ժամանակաշրջանի մէջ : Աշխարհի վրայ ո՞ր եւ է ազգի գրականութիւն (մերն ալ մէջը ըլլալով) կարող է չորս քառորդ դարու մէջ չորս գրագիտունի թւել և արգահատիլ գերմանիոններու հսկումներուն վրայ : Բայց բարեբաղդաբար—Գերմանիայի համար՝ բարեբաղդաբար—արգահատելու տեղի չկայ հոն՝ ուր հիանալ միայն սպասելի է . ոչ մէկ գրականութիւն կրնայ այնքան պարծիլ կիներու սերտ , բեղուն աշխատակցութեամբը , որքան գերմանականը , և եթէ Պրն. Մ. Թ. յիսուն անգամ ալ մեծցնէր իր երկու «վոքը խումբ»ի գրագիտունիներուն թիւը , դեռ շատ հեռու պիտի մնար չափազանցած ըլլալէ : Անշուշտ անցած դարու գրողներ ըսելով չպէտք է հասկնալ միայն անցած դարու մեռած գրողները : Ինչպէս Յոնավար Աին , Գեկանբեր 31ը , երէկը , անցած տարին է , նոյնպէս սա դաշաշրջանի սկիզբին , 1900ը—այդ զվազիր երէկը—անցած դարն է և բոլոր այն գրագիտունիները՝ որոնք մինչև այդ ժառանգ իրենց անունովը պատկած են որ և է հատոր կը պատկանին վերջին քառորդ դարուն , թէև անոնք շարունակէն ապրիլ և արտադրել : Ան

այս ժամանակաշրջանի կին գրողները ոչ թէ ուշագրու են միայն իրենց կին ըլլալու եւ կանացի գրականութիւն մը մշակելու հանգամանքով , այլև , այլ մանաւանդ , իրենց երկասիրութիւններուն իրական արժանիքով : Ճշմարիտ գրական բննադատութիւնը չի հպատակիր galanterieի : Մարիլ Էպնըր-Էշընպօլս և Դլարա Ֆիպիկ միայն և միայն իրենց հոգի տալանդներովն է որ կը հարկադրեն հիացում :

Գունն ամբողջ էշ մը պէտք էր ինծի թւելու համար անունները այն գրագիտունիներուն , որոնք իսկապէս արժանի են այդ անունին և որոնք կը կարողացունին : Բայց լոկ անուններու յիշատակութիւնը՝ առանց ժանտութեան՝ կարող է հետաքրքրական չլինել ընթերցողներու համար , մանաւանդ իմ նպատակս ալ չէր զանոնք ներկայացնել այստեղ : Պիտի բաւականանամ միայն թւել ամէնէն յաճախ յեղեղուած և ամէնէն աւելի սիրւած անունները քանի , մը «նշանաւոր» գրագիտունիներու , որոնք արդի գերմանական գրականութեան մէջ իրենց արժանաւոր տեղը սնին Շերիմակլին , Լիլիքնզուսի և Ռոզզէկկլըի կողքին և անոնց հաւասար , և որոնք մէկէ աւելի , երբեմն տասնէ ալ աւելի հատորներ արտադրած են : Ասոնք են Դլարա Ֆիպիկ , Ռիպարտա Հուի , Հէլենը Պէտրլու , Կապրիէլը Ռոյմըր , Շարլոթթը Նիզ , Լուիզը ֆօն Ֆրանսուա , Մարիա Եանիչէք , ժուրտա ֆօն Պիլզով , Իլզէ Ֆուարան , Նամայի ֆօն Էշմուու , Լու Անտէնաս-Սալմէ , Էռնոթ Կոսմէր , Աննա Ռիմըր , Մարիլ Էյօկէնի Կոացի , Հանս ֆօն Քառլընզէրկ , Էլզա Ազլենիէֆ և ուրիշներ :

Նոր հրատարակութիւններու ուշադիր հետեւող մը իսկոյն պիտի նկատէր , որ շարածական գունն տասնեակ հատոր կիներու հեղինակութիւն են , և ադ ամէն շաբաթ , ամէն շաբաթ :

Մեր յուսածապիլը շատ գէշ կը ճանչնայ գերմանունի գրողները , ինչ որ պատճառեղծ է անադար ըլլալ անոնց նկատմամբ : Իր վերաբերմունքը ինծի կը յիշեցնէ այն անգլիացի ճամբորդը , որ՝ հազիւ Տոպլէն Դալէ անցած՝ կը հանդիպի շախ շէկ և շատ գէթ կնոջ մը , և իսկոյն իր կարծիքը կը կազմէ , իր յուշատետրին ու իր նոտանքն

րուն մէջ արձանագրելով մեծ և անհերքելի ճշմարտութիւնը . «Բոլոր ֆրանսուսիները շատ շէկ և շատ գէր են . . . » :

Պրն. Մ. Թ. իր թւած զրազիտութիւնը անմար կ'ըսէ որ «անցած հարիւրակի կէսին» սկսած են իրենց զբաղման գործունէութիւնը . մինչդեռ իստա Զան-Զան մինչեւ 1851 թւականը մօտ 17 երկասիրութիւն ունի , իսկ Ֆաննի Լէվալու՝ 7 : Նաև ֆոն Տիւրնկաֆէլտի համար կը յայտնէ որ «կանխահաւ հանձնար մըն է և երբեք իր կաշառեալ հատուկութիւնը չէ ունեցած : Իր վէպերը կանխահաւ երկասիրութիւններ են» : Ինչպէս միեւնոյն

ատեն թէ կանխահաւ հանձնար ըլլալ և թէ երբեք կատարեալ հատուկութիւն չունենալ : Ու ի՞նչ պէտք է հասկնալ «հանձնար» ըսելով : Եթէ կէսթէ և վականէր հանձնարներ են , հանձնար են նաև մոռացութեան դատապարտւած , և արժանաւորապէս , իստա ֆոն Տիւրնկաֆէլտը և Հէնրիէթը Բաալցովը [և ո՛չ Բաալցով , ինչպէս անւանած էր Պրն. Մ.Թ.] :

Պիտի նոխընտրէի որ Մասիալ ընծերցողները անգիտանալին գերմանական զրագէտները , քան թէ սխալ ճանչնալին և անարգարօքն դատէին :

Անվերս

ԱՅՈՒՐ ՇԱՀԻՆ

ՔՆԱՅՈՂ ԱՂԶԻԿԸ

Սնդուաներու դիւթական փրփուրին մէջ սպիտակ՝
Տեսայ որ ան կը մրափէր՝ ինչպէս կամիլ մը ցօղի
Կը քնանայ յուրօրէն շուշանի մը շուքին տակ,
Բիւրեղ մարմինը գինով երազներովն իր յըղի :

Գիսխուփ կոպին տակ աչքերն կը հալէի՛ն կապուտակ,
Մերկ ուտերէն վար կարծես Թեթև արշաւ մ'էր դողի .
Ու ալեվէտ մազերու խարտիշազեղ քողին տակ
Կ'ելեւէջէր իր գեռհա՛ս , փոքրիկ լանջըը կատաղի . . . :

Այսպէս մուծին մէջ փռուած , զիցունիի մը պէս հին ,
Ձեռ գիտեր ի՛նչ մ'ունէր ան պաշտելի ու ահաւոր ,
Դեռափթիթ աղջըկան իր մըրափին մէջ լռին :

Ու իր շունչին մէջ համակ անըջանքի , համբոյրի ,
Դե՛ռ չի ծծուած բոյրերու պատարագ մ'էր հեշտօրօք . . .
Օ՛հ , քնացող կիրքերէն ծորող նեկտարը վայրի . . . :

Ո. ՍԵՒՍԿ

ՔԱՒՇԱՆՃԵԱՆ ՏՈՒՆԻՆ

ՎԵՐԱԿԱԶՍՈՒԹԻՒՆԸ

Նիւ-Եօրքի Թերթերուն մէջ երեւցած ծառացում մը կը հաղորդէ Թէ՝ Թաւշանճեան Վաճառատունը վերակազմուած է Նիւ-Եօրքի Նահանգին Օրէնքին համեմատ Նոյմ. 27 Թիւով ձեռք բերուած արտօնագիրով մը, H. S. Tavshanjian, Incorporated անունով, 33, 35 եւ 37 East 17th St., New York : Վերակազմուած Տունին Նախագահն է [President] Տիկին Յ. Ա. Թաւշանճեան. Դանձապէս է Բնդամուր Վարիչն է Աւոս Յ. Թիրեաճեան եւ Քարսուղարն է Մ. Յ. Թիրեաճեան: Պաշտօնապէս արձանագրուած դրամագլուխն է կէս միլիոն տօլար կամ հարիւր հազար անգլիկ : Թաւշանճեանի 25 տարի առաջ հաստատուած տունին գործն է Թուրքիայէն ու Պարսկաստանէն գորգերու եւ կապտերներու ներածումը, որ առաջ պիտի տարուի, իր գործակալութիւններուն միջոցով՝ Կ. Պոլիս եւ Դաւրէժ : Իրենց գործին մէջ կը մնան 17 տարիէ ի վեր վաճառումի պատշոյնայ երոյ Մր. Ս. Քէսիկն եւ Տիւր Յ. Ա. Դաւալէ : Վաճառատունին վարիչ կամ Տնօրէն Աւոս Խան Թիրեաճեան, որդի Տօք. Յ. Թիրեաճեան Խանի եւ Բեառդի հանգուցեալ Թաւշանճեան է՝ Ի, հինգ տարիէ ի վեր այս վաճառատունին մէջ կը գործէր արդէն. արեւելեան գորգերու մասնագէտ մըն է ինք եւ անձնական հաւակով ալ շատ մօտէ մշակած է այս հիւրը եւ փայլուն անուն մը ունի Նիւ-Եօրքի հրապարակին վրայ : Վաճառատունը Նիւ-Եօրքի 17րդ փողոցէն մինչեւ 18րդ կը տարածուի, կալուածներու ամբողջ կողմի մը զբաղեցնուի :

§ Ասացանք Ազգ. Հիւանդանոցի 1908ի Բնդարձակ Օրացոյցը, ստուարածաւալ, խմանուած սպաւորութիւնով ու բովանդակութիւնով գեղեցիկ հասոյ մը, լեցուն ամէն կարգի օգտուէտ ծանօթութիւններով : Օրացոյցը պէտք մըն է ամէն դասակարգի անհասներու : Այս տարուանին խմամբ տարածուի՝ կարելի նորութիւններով ու անհրաժեշտ էջերով օժտելու համար : Հակառակ ծառային ու հոյս պարունակութեանը՝ կը ծախուի 10 դր. ի չափաւոր գինով :

Անցած չորեքշաբթի, Բերաի Ս. Երրորդութիւն Եկեղեցիին մէջ, վայելաչառ եւ սեղի ունեցաւ յուրարկաւորութիւնը ազնուազարմ ու առաքինի տիկնոջ մը, այրի տիկին Երանուհի Պ. Եղանանեանի, ուր Ծեան է՝ Երանու եւ Օր. Եւփիմէ Ծեանի : Հանդէսին կը նախագահէր Գեր. Տ. Հմայեալ Եպիսկ. Դիմախեան, իր շուրջը ունեցնալով Տ. Տաւադ Վարդ. Ոսկանեան եւ Տ. Գրիգորիս Վարդ. Աբարթեանը եւ համահաճեալ : Տաներեց Տ. Յովն. Քանն. Մկրեան դասը կեցած էր սգակիր : Տխուր արարողութենէն ետք, ներկաները իրենց ցաւակցութիւնը յայտնեցին խաչիկ է՝ Ծեանի եւ հանգուցեալին զաւկին՝ Պօղոս է՝ Եղանանեանի : Յետոյ մարմինը փոխադրուելով Շիրիի Գերեզմանատունը, ամփոփուեցաւ ընտանեկան յաւուր զամբարանին մէջ : Տիկին Ե. Եղանանեան պատկանելով զարգացած եւ պատուական ընտանիքի մը, իր անձնին հանրաժանօք էր իր ուսումնական եւ առաքինատէ կին : Խմանակալունի եղած է Սիլիսարի Ս. Խաչ Վարժարանին, որուն առաջդիմութեանը մեծապէս սատարած է : Իր ծանօթներու շրջանակին մէջ մեծապէս կը յարգուէր : Մեր ցաւակցութիւնները՝ Ծեան եւ Եղանանեան զերգասաններուն եւ մասնաւորապէս Ազգ. Օր. Եւփիմէ Ծեանի, մէկը հայ մատարակամութեան արժանաւոր մշակներէն :

§ Ազգ. Պատրիարքարանի Դիւանապետ Բարբող է՝ Թէլեան՝ դժբաղդութիւնը ունեցաւ շաքրու կորսնցնելու իր զոհանշմայրը, այրի Տիկին Փերոնէ Բիւշիւնեան : Խոնուն եւ բարեպաշտ կին մըն էր, յարգանք շահած բոլոր իր մօտաւորներուն : Յուրարկաւորութիւնը կատարուեցաւ Սիլիսարի Ս. Կարապետ Եկեղեցիին մէջ եւ մարմինը ամփոփուեցաւ սեղին զերեզմանատունը : Մեր ցաւակցութիւնները կը յայտնենք Բարբող է՝ Թէլեանի :

§ Վարդ, կիրակի, Խնիօն Ֆրանսէզի արանին մէջ, սեղի կ'ունենայ Սեոփը Միւզիքալի կազմակերպած չորս յաջորդական նուագանդներուն Բ. ր., մասնակցութիւնով ծանօթ արուեստագէտներու : Յայտագիրը՝ կը խոստանայ փայլուն ցերեկայ մը :

Հիմնադիր Կ. Ս. Ինֆիւնիստէն : Արտօնատէր ՏՕԳԹ. Ե. ՄԱՍԻՍ : Տպագր. Բ. ԶԵՆԵԱՆ

ՆՈՐ ԳՐԱՏՈՒՆ [ԲԻԲԼԻՈՂԶԱՆԷՏԻ ԷՏԵՊ]

Լեւոն Էֆ. Տէյրմէնճեան, որ գրավաճառական և տպագրական գործերու մէջ երկարամեակեայ փորձառութիւն ստացած է, այս անգամ Պապը Ալի Ճատտէսի ձրգալ Օղլու փողոցը նոր գրատուն մը հաստատած է՝ «Բիբլիոպանէի Էտէպ» անունով, ուր կը ծախուին թուրք, հայ, և ֆրանս. գիրքեր։ Կը տպագրուին քամպիալ, նամակի և պահանջների զլուծներ, մահազդներ, հարսանեկան հրաւիրագիրներ, այցաքարդեր եւ այլն։ Կը կազմուին՝ խնամուած կերպով ամէն տեսակ՝ գիրքեր եւ լրագիրքի հաւաքածոներ եւ այլն։

Խիստ դիւրամասշեղի պայմաններով

Անոնք որ այս գրատունին հետ գործ ունենան, փորձով պիտի համոզուին Տէյրմէնճեան Էֆ. ի ճշգտագոյնութեան եւ յանձնարարութիւններուն արագ ու ճշգրիտ գործադրութեան։

ԾԱՂԻԿ տղոց շարքաթիւրթ . — Կը հրատարակուի տղոց և դպրոցականներու յատուկ նիւթերով, Սաղաթեան խնամուած տպագրութիւնով։ Տարեկան բաժանորդագրութիւնն է 30 դրշ.։ Տնօրէն՝ Սաղաթեան։ Հասցէ՝ Ղալաթիա, Գուրչունդու խան, թիւ 7, ուր պէտք է ուղղել նամակ, բաժանորդագիրն կամ որ եւ է գրութիւն։

ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆ ՄԸ

Ծանօթ ատանաբաւում խաչիկ Էֆ. Ժամկուեան՝ պատիւը ունեցած է անդլիացի տիկինէ մը ստանալու հետեւեալ նամակը .

Սիրելի Տէր . —

Շնորհապարտ եմ Ձեզի որ՝ Սկովտիոյ և Մասաչուսէթի մէջ տարիներով դարմանել տալ չկրցած տկուաներս՝ հիմնապէս բուժել յաջողեցաք։

ՏԻԿԻՆ ԱՆՆԷԹԱ ՄԱՅԼԱ

ՄԱՐԴԿԱՅԻՆ ՄԱՐՄԻՆԸ

Աշխատասիրեց՝ ՏՕԳԹ. ՅՈՒՍ. Տ. ՍՏԵՓԱՆԵԱՆ

Այս հատորը՝ դիւրահասկնալի լեզուով և հղանակով ծանօթութիւն կու տայ մարդկային մարմինին կազմախօսութեամբ և առողջապահութեանը վրայ։ Զերմապէս յանձնարարելի է ամէն ընտանիքի և ամէն անհատի, քանի որ մարմնական առողջութիւնը առաջին պայմանն է կեանքի երջանկութեան։ Կաղանդի ստիժով մանաւանդ յարմարագոյն նուէրը՝ իր մաքուր տպագրութեամբը, բազմաթիւ պատկերներովը եւ ընտիր կազմովը։ Վաւերացուած է Ուսումն. Խորհուրդէն՝ իբր դասադիրք բարձրագոյն և լրացուցիչ դասընթացքներու ուսանողներու։ Գինը 10 դրուշ։ Կեդրոնատեղի՝ Յ. Մատթէոսեան թղթավաճառատուն, Ամերիգան խան, Կ. Պոլիս։

ՀԵՂԻՆԱԿՆԵՐՈՒՆ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿԻՉՆԵՐՈՒՆ

Հեղինակներէ և հրատարակիչներէ անոնք՝ որ կը բաղձան Մասիսի մէջ ծանուցութիւն իրենց հրատարակութեան, պէտք չէ մտնան մեր պայմանը թէ, 2 օրինակ զրկուած գիրքերը միայն նկատողութեան կ'առնուին և կը ծանուցուին :

ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԹԵՐԹ ազգային, գրական եւ քաղաքական. — Բա-
ժանորդագրութիւն Կ. Պոլսոյ համար՝ տարեկան 80, վեցամսեայ 45
դրշ., գաւառներու համար՝ տարեկան 108 դրշ., վեցամսեայ 60 դրշ.
և օտար երկիրներու համար՝ տարեկան 35 ֆր. վեցամսեայ 20
ֆր. : Զեռքէ վաճառու՝ 5 ասը փարս : **ԱՐԵՒԵԼՔ** հրատարակ
կ'ելլէ ամէն օր, կէս օրին, խնամալ բովանդակութեամբ, ըն-
տիր յօդուածներով, թարմ լուրերով ու նորագոյն տեղեկութիւններով :
ԱՐԵՒԵԼՔ, իր վերակազմած խմբագրութեամբ և իր կարող աշխա-
տակիցներով առաջնակարգ տեղ մը կը զբաւէ տեղական հայ մամուլին
մէջ, արժանացած՝ բնթերցողներու գնահատմանը, իր աստեղծութիւններէն
մէկն է ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԸՆԴՈՒՆՈՒ ԸՆԴՈՒՆՈՒ ԸՆԴՈՒՆՈՒ : Հանդամանքը, որով իր ընթերցողնե-
րուն կը ներկայացնէ պարբերաբար Յանօթ Գէօքի և երբեմն ալ տե-
սարաններ : Ոչ նուազ կը գնահատուին իր մասնագիտական յօդուած-
ները, եկեղեցական, կրօնական, անտեսական-սեղանաւորական, եր-
կրագործական, իրաւարանական և այլն, բացի գրական, բանասիրա-
կան գրուածքներէ, որոնք տեսութիւններէ են : **ԱՐԵՒԵԼՔ**ի վերաբերեալ
ամէն գրութիւն և բաժանորդագին ուղղել Տէր և Տնօրէն Գառնգին
էֆ. Պոյաճեանի հասցէին, Դալաթիա, Մահմուտիէ Ճառախէսի, ուր կը
գտնուին թերթին Տպարանը և Խմբագրատունը :



Je prends tous les jours
de la vraie
CRÈME DE MORUE
de la Ph^e PEQUART de VERDUN-s/-Meuse
C'est très bon!!!
Petite mère, se méfie des produits
similaires; mauvais et digérant mal.
Le Flacon: 3^{fr} 50 dans les Pharmacies.
« SUPERIEURE A L'HUILE de FOIE de MORUE et aux EMULSIONS. »

Նշանաւոր Տոքթ. Բէքառի
առ Էմիլիանը կը դերա-
դանցէ հրատարակի վրայ
գտնուած բոլոր իր նմանե-
րը : Զուկի իւրի տեղ կը դուր-
ծածուի և անկէ աւելի
օգուտ ունի աղոց և տկար

անձերու : Միակ ներկայացուցիչ Թուրքիոյ . Ո. Սօլախեանց, Կ. Պոլիս :

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ Մ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԱՄԵՆԱՎԵՐՋԻՆ ԴՐՈՒԹԵԱՄԲ կը դարձանէ ամէն տե-
սակ ակադի և լինտի հիւանդութիւնները, փոսած ակաւները կը լիցնէ
առողջ ակաւներու պէս երկար առեն դորձածուելու պայմանով :

ԲՈՂՈՐՈՎԻՆ ՆՈՐ ՄԵԹՈՏՈՎ, նուրը, ճաշակաւոր և զիմացկուն
արուեստական ակաւներ կը պատրաստէ, բնականին ճիշդ նման :

Հիւանդ կ'ընդունի ամէն օր իր դարձանաւան մէջ, Բերա, Մեծ
Բարձաք-Գաբու, թիւ 8 : Կարօտ հիւանդները ձրի կը դարձանէ հիւ-
շարթի օրերը՝ Բերաի Աղքատախնամ դարձանաւանին մէջ :

Կիտակի օրերը ժամադրութեամբ կ'ընդունի :

ՄԻԱՄԻՏԻ ՄԸ ԱՐԿԱԾՆԵՐԸ

Գեղեցիկ տպագրութիւնով, գեղարուեստական կողմով, գրական հրապարակչ ներքինով: Օրուան գիրքը և ամէնէն խօսուած հրատարակութիւնը: Էջ 280: Գինը՝ 7 զրշ. Կեդրոնատեղ՝ Սթամպոլ, Շիրին խան, թիւ 7, Օննիկ և Բնիկ: Կը գտնուի ամէն գրավաճառի քով:

ԳՐԱՏՈՒՆ ՀԱՊԷՇԵԱՆ. Ս.Մ.Ս.ՍԻՍ. Ամասիայի և չրջականե-

րու գրական պէտքերուն լիուլի գոհացում տալու համար է որ հիմնուած է այս նոր գրատունը, ուր գիտակից խնամքով կը պատրաստուին արուած բոլոր յանձնարարութիւնները: Մասնաւորապէս յանձնարարելի է այս գրատունը բոլոր ուսուցիչներուն ու գրասէրներուն, իբր միակ կեդրոնատեղ լաւագոյն դասագիրքերու եւ լաւագոյն հրատարակութիւններու:

Միակ առտուան Հայաթերթը, կը հրատարակուի ար-
Մ Ա Ն Ձ Ո Ւ Մ Է չալոյսին, և առտուն խիստ կանուխ՝ կը գտնուի Պոլիսի և արուարձաններու ամէն կողմը, բովանդակելով հեռագիրներ, քաղաքական, ներքին, եկեղեցական ու կրթական լուրեր, գրական, տնտեսական և ընկերային յօդուածներ: Զորեքշաբթի եւ չաբաթ օրերը կը հրատարակուի առանց ծանուցումի, չորրորդ էջը յատկացնելով առեւտրական և գրական գրուածքներու: Գինն է 10 փարա: Տարեկան բաժանորդագրութիւնն է Պոլիս՝ 80 զրշ., գաւառ՝ 108, արտասահման՝ 25 ֆր.: Վեցամսեայ՝ Պոլիս՝ 50, գաւառ՝ 60, արտասահման՝ 18 ֆր.: Ամէն գրութիւն ուղղել Տէր եւ Տնօրէն Յովհաննէս Զ. էֆ. Դայսէրեանի հասցէին՝ 38, Պապը Ալի Ժառաէսի:

Իպրոցներու համար ակերածեշ

Դրասկենակներու համար կարեւոր

«Սայուն»ներու համար գեղեցիկագոյն զարդը՝

ՀԱՅԵՐԷՆ ԵՐԿՐԱԳՈՒՆՏԸ

Հրապարակ ելաւ՝ վաւերացուած Հանր. Կրթութեան Նախարարութիւնէն: Վարժարաններու վարիչներուն, բոլոր ընտանիքի հայրերուն և հայ վաճառականներուն կը յանձնարարուի մէյ մէկ հատ գնել այս կարեւոր և գեղեցիկ զարդէն: Գինն է չրջանակով 85, առանց չրջանակի 65 զրշ. գաւառներու համար՝ իբր սնտուկի և փոխադրութեան ծախք 15 զրշ. աւելի: Գինը՝ Պապը Ալի Ժառաէսի, թիւ 56, Յովհ. էֆ. Ազնաւորի «Օմանլը» Գրատունը:

ՏՐԴ. ԳԵՂԱՐՈՒՆՍԱԿԱՆ ՅՈՒՅԱՀԱՆԴԷՍ «ՍԻՆԿԵՐ»Ի

Բերա, Մեծ-Փողոց, Թ. 343, Ա. Յարկ

Ամեն օր լոյս կ'

Մ Ո Ւ Տ Ք Ը Ձ Ր Ի

Ա. Կարգի մրցանակ հետեւել ցուցումովէսնեբէն. Բարիզ 1900, Սէն-Լուի 1904, Միլան 1906, Պրում 1906:

“ՄԱՍԻՍ”, Ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Պոլիսի և զաւառներու համար տարեկան 60 ղրչ :

Արտասահմանի » » 14 ֆրանք :

Թղթատարութեան ծախքը մեր վրայ :

Բաժանորդները իրաւունք ունին ստանալու մեր պարզեւները,

միշտ ձրիաբար, թղթատարութեան ծախքն ալ մեր վրայ :

Մասիսի բաժանորդադրութիւնը բացարձակապէս կանխիկ է :

Դրամ կարելի է զրկել փոխանակադրով, օսմանեան կամ

օտար վանճա-փօսքով և օսմ. թղթատարական նամակադրոյ-

մով, 20 հատը մէկ մէհիտի հաշիւով :

Զննատարակուած ձեռագիրները ետ չեն դարձուիր :

Նամակ կամ որ և է գրութիւն ուղղել առ

Ե Ն Ո Վ Ք Ա Ր Մ Է Ն

“ՄԱՍԻՍ”, Ի Հասցեով

Պապը Ա.Լի ճաւսէսի, Թիւ 38

درعليه باب على جاده سنده نومرو ۳۸ «ماسيس» غزتهسى اداره خانهسى

Rédaction de la Revue «MASSIS»

N. 38, Avenue de la Sublime Porte

CONSTANTINOPLE

“ՄԱՍԻՍ”-ի նոր Շրջանի Ա. Տարիի հաւաքածոն, որ 1000 էջէ բաղկացած գրական գեղեցիկ հասոր մը կը կազմէ, հիմայ ստացուիլ խմբագրութենէս, կանխիկ փոխար-
ժեւով՝ 60 դր. կազմուած 65 : Թղթատարով որկուելիք
Հասոյցներու համար պէտք է 5 դր. աւելի վճարել :

Պ. ՊԱԼԵՆՑ ԳՐԱՏՈՒՆԻՆ ՄԷԶ

Կը գտնուի Կաղանդի նուէրի համար ընտելագոյն գիրքերու ճոխ
մթերք մը, որմէ կ'արժէ որ օգտուին ծնողքներ : Դեղեցիկ ընտրու-
թիւններ են մանաւանդ՝ նորատիպ ստուար գործը ողբացեալ գրողե-
րին՝ Յ. Ռ. ՊԷՐՊԷՐԵԱՆԻ :

ԴՊՐՈՅ ԵՒ ԴՊՐՈՒԹԻՒՆ

Արժէքաւոր ու մտահնադարանի զարդ ըլլալու սահմանուած
գեղեցիկ հատոր մը]

ԴՈՒՆ ՊԻՏԻ ԸԼԼԱՍ ԴԱԻԹ ԽԱԶԿՈՆՑ-Ի

[Օգտաւէտ հատոր մը տղոց համար]

ԲԱՐՈՑԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ՝ Գ. ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ-Ի

[Հրահանգիչ, զրօնեցուցիչ և հետաքրքրական]

Եւ ուրիշներ, զորս տեսնելու համար՝ պէտք չէ ստիժ կորսնցնել՝

այցելելու Պալենց Գրատունը :